ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ ԼՈՐԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (Նանսի, Ֆրանսիա)
ԵՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (Երևան, Հայաստան)
ՄԻՋԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լորենի Համալսարանը, այսուհետև՝ ԼՄ, գտնվող՝ 34 Քուր Լեոպոլդ CS 2523354052 Նանսի Սեդեքս, Ֆրանսիա հասցեում, ի դեմս իր նախագահի՝ Պրոֆեսոր Մուցենհարդի, մասնակցությամբ LMOPS, EA 4423 Օպտիկական Նյութերի և Ֆոտոնիկական Համակարգերի լաբորատորիայի, վարիչ՝ Պրոֆեսոր Ժան-Պոլ Սալվեստրինիի, մի կողմից, և Խաչատուր Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի, այսուհետև՝ ՀՊՄՀ, գտնվող՝ Տիգրան Մեծի պող. 17, 0010 Երևան, Հայաստան հասցեում ի դեմս Ռեկտոր՝ պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի, մասնակցությամբ Քվանտային էլեկտրոնիկայի և Ինտեգրալային Օպտիկայի նոր նյութերի լաբորատորիայի վարիչ՝ Դոկտոր Էդվարդ Կոկանյանի մյուս կողմից , որոնք հետագայում միասին կկոչվեն «Կողմեր» իսկ առանձին՝ «Կողմ», նպատակ ունենալով աշխատանք տանել համալսարանների միջև համագործակցության և գիտական հարաբերությունների ընդլայման ուղղությամբ, նպաստելով ոչ գծային օպտիկական, լազերային ու ֆոտոնիկական նյութերի հետազոտության և բարձրագույն կրթության զարգացմանը, եկան համաձայնության հետևյալի մասին.

Հոդված 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը կատարում են համաձայնեցված հետազոտություններ՝ ուղղված նոր նյութերի ստացմանը ոչ գծային օպտիկայում, ֆոտոնիկայում, լազերային, օպտիկական սենսորային և հաղորդակցման համակարգերում կիրառելու համար, նրանց ֆիզիկական, ֆիզիկա-քիմիական, կառուցվածքային, օպտիկական, սպեկտրադիտական և այլ կարևոր հատկությունների համատեղ ուսումնասիրությանը:

1.2 Կողմերի միջև օպտիկական տարրերի ու նյութերի փոխանակումը իրականացվում է երկկողմանի կապերի հիման վրա՝ Ֆրանսիայում և Հայաստանում գործող օրենսդրությանը համապատասխան և համակարգվում է ներկա համաձայնագրով:

1.3 Կողմերը համաձայնում են փոխանակել ուսանողներ, դասախոսներ, պրոֆեսորներ, հետազոտողներ և ասպիրանտներ:

1.4 Կողմերը համագործակցում և աշխատում են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ու փոխշահավետ այլ բնագավառներում, ինչպիսիք են՝.

- Նոր օպտիկական նյութեր ու տարրեր ձեռք բերելու տեխնոլոգիական և տեխնիկական աշխատանքներ ինչպես նաև այդ նյութերի ու տարրերի բնութագրում ու հետազոտություն:
- Ստացված օպտիկական նյութերի ու տարրերի ֆունկցիոնալ պարամետրերի փորձարկում և չափում:
- Ստացված օպտիկական նյութերի ու տարրերի ֆիզիկական, քիմիական, և այլ պարամետրերի մասին տեղեկությունների փոխանակում, ինչպես նաև Կողմերի աշխատանքի վերաբերյալ գիտական ինֆորմացիայի փոխանակում:
- Մասնագետների փոխադարձ այցելությունների անցկացում;
- Մագիստրատուրայում և դոկտորանտուրայում (ասպիրանտուրայում) սովորող ուսանողների համատեղ ղեկավարման քաջալերում ու զարգացում;
- Համատեղ գիտական հոդվածների, գրքերի, ուսումնասիրությունների և մեթոդաբանական ձեռնարկների պատրաստում և հրապրակում;
- Կողմերի փոխադարձ համակարգմամբ իրենց աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներին:
- Գիտական կոնֆերանսների, սեմինարների, սիմպոզիումների, ցուցահանդեսների, դասախոսությունների, կարճատև հետազոտական կուրսերի և ժողովների կազմակերպում ու նրանց մեջ մասնակցություն:
- Տեղական, Եվրոպական, միջազգային գիտական և տեխնիկական նախագծերին ու ծրագրերին համատեղ մասնակցություն՝ պաշտոնական (Ֆրանսիական, Հայկական, Եվրոպական, CIS-CEI և այլն) աջակցությունը ձեռք բերելու նպատակով:

1.5 Կողմերը իրավունք են վերապահում փոդադարձ համաձայնությամբ և ըստ պատշաճի սահմանել համագործակցության այլ բնագավառներ: Այս պարագայում կկնքվեն կոնկրետ լրացուցիչ համաձայնագրեր՝ հաստատված իրավասու մարմինների կողմից:

Հոդված 2. Սույն շրջանակային համաձայնագրի կիրառման կոնկրետ կոնվենցիան

Սույն շրջանակային համաձայնագրի Հոդված 1-ում նշված համագործակցության գործողությունները կիրառման կոնկրետ կոնվենցիաների առարկա կհանդիսանան: Դրանք կլինեն շրջանակային համաձայնագրի անբաժանելի մասը է կլինեն և կողմերը պարտավորվում են հարգել դրանք:

Հոդված 3. Համաձայնագրի տևողությունը

Սույն համաձայնագիրը ուժի մեջ կմտնի երկու Կողմերի կողմից ստորագրվելու պահից՝ հինգ տարի գործողության ժամկետով և, ի վերջո, համապատասխան

ուղղումով կրկնվի կարգավորող մարմինների համաձայնությունից հետո: Այն ուժի մեջ կմտնի հաստատումից հետո Ֆրանսիական եւ Հայկական համալսարանների իրավասու մարմինների կողմից, յուրաքանչյուր գործընկեր կառույցի համապատասխան ընթացակարգերով հաստատումից հետո:Յուրաքանչյուր կողմ կարող է դադարեցնել սույն համաձայնագրի գործողությունը՝ մյուս կողմին վեց ամիս առաջ տեղեկացնելով ընհատման մասին:
Սույն համաձայնագրի այս կամ այլ հոդվածներում ցանկացած փոփոխություն ենթակա է ուղղման, որը կլինի կարգավորող մարմինների նախնական համաձայնության առարկա:
Դադարեցումից հետո, ո՛չ ԼՀ և ո՛չ էլ ՀՊՄՀ հաշվետու չեն լինի միմյանց ընդհատումից բխող ֆինանսական կամ այլ կորուստների համար:
Այն աշխատանքները, որոնք ընթացքի մեջ կլինեն դադարեցման պահին, կշարունակվեն մինչև իրենց ավարտը:

Հոդված 4. Հավասար հնարավորություններ

Որպեսզի իրագործվի սույն համաձայնագիրը կողմերը պարտավորվում են երաշխավորել հավասար հնարավորություններ առանց ռասայական, սեռային, կրոնական, սոցիալական և էթնիկական խտրականության:

Հոդված 5. Կողմերի պարտավորությունները

5.1 Կողմերը համաձայնվում են գաղտնի համարել և որևէ երրորդ կողմին չբացահայտել, որևէ միջոցով կամ ձևով, սույն համաձայնագրում նշված ժամանակահատվածի ընթաց քում որևէ տեղեկություն ներառող, բայց չսահմանափակվող, փաստաթղթեր, համակարգեր, համակարգչային ծրագրեր, know-how, մեթոդներ, կամ գիտելիքներ՝ ստացված մյուս կողմից կամ ձեռք բերելի սույն համաձայնագրի իրականացման ընթացքում ուղղակի կամ անուղղակի եղանակով (այսուհետև «Գաղտնի Տեղեկություններ»): Սույն պարտավորությունը չի վերաբերում որևէ տեղեկության, որ հասու է ընդհանուր հանրությանը:

5.2 Կողմերը համաձայնում են օգտագործել գաղտնի տեղեկությունները ու "know-how" միայն վերոհիշյալ նպատակներով և ոչ մի այլ նպատակով, եթե իհարկե կողմերը չեն պայմանավորվել այլի մասին:

5.3 Սույն համաձայնագրի համաձայն Կողմերի համագործակցությամբ ստացված արդյունքների կամ "know-how"-ի մասին տեղեկատվության բոլոր հրապարակումները կամ հաղորդակցությունները Կողմերից որևէ մեկի կողմից այս համաձայնագրի տևողության ընթացքում և համաձայնագրի գործողության ժամկետի լրանալուց հետո վեց ամսվա ընթացքում պետք է նախապես գրավոր

լիազորվեն մյուս Կողմով, որը կտեղեկացնի իր որոշման մասին առավելագույնս երկու ամսվա ընթացքում՝ խնդրանքի ներկայացման պահից: Ֆիքսված վերջնաժամկետի վերջում, և պատասխանի բացակայության դեպքում, թույլտվություն համարվում է տրված:

5.4 Կողմերը համարում են, որ սույն համաձայնագրին առնչվող արդյունքները և "know-how"-ն այն կողմի սեփականությունն են, որն առաջինն է հայտնաբերել դրանք:

5.5 Յուրաքանչյուր համագործակցության համար Կողմերը կստորագրեն կոնկրետ համաձայնագիր: Այն կներառի հատկապես մտավոր սեփականությանը վերաբերող դրույթներ և կձևակերպվի ընդհանուր միջազգային հետազոտական նախագծերի հետ կապված, որոնց Կողմերը կմասնակցեն միասին:

Հոդված 6. Համաձայնագրի համակարգողներ

Համաձայնագրի իրականացման համար կողմերը նշանակում են հետևյալ համակարգողների՝ Լորանի համալսարանի համար՝ Պրոֆեսոր Միշել Էյլերիին և Հայկական պետական մանկավարժական համալսարանի համար՝ Դոկտոր Էդվարդ Կոկանյանին:

Հոդված 7. Այլ պայմաններ

7.1 Ներկա Համաձայնագիրը Կողմերի փոխադարձ ֆինանսական պարտավորությունների հիմք չէ:

7.2 Սույն Համաձայնագրում ոչինչ չի նախատեսվում որևէ իրավունքի կամ լիցենզիայի որևէ արտոնագրի շնորհման, "know-how"-ի, առևտրական գաղտնիքի, գյուտարարության, հայտնագործության, հեղինակային իրավունքի կամ մյուս Կողմի գործող կամ ապագա մտավոր սեփականության իրավունքների բարելավման ներքո:

7.3 Կողմերը աջակցում են Համաձայնագրի աշխատանքների իրագործմանը:

7.4 Ներկա Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ ընդարձակվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնության հիման վրա:

7.5 Ներկա Համաձայնագիրը կարող է չեղարկվել մինչև նշված ժամկետը Կողմերից մեկի նախաձեռնության հիման վրա: Մյուս Կողմերը պետք է գրավոր տեղյակ պահվեն դրա մասին ոչ ուշ քան չեղարկումից երկու ամիս առաջ:

7.6 Բոլոր այլ հարցերով, որոնք նշված չեն տվյալ Համաձայնագրում Կողմերը հետևում են իրենց երկրի օրենքներին:

7.7 Համաձայնագիրը կնքված է վեց բնագիր պատճեններից՝ երկու անգլերեն, երկու ֆրանսերեն և երկու հայերեն: Դրանք նույնական են իրենց ոգով և մեկնաբանմամբ:

7.8 Մեկնաբանման խնդիր ունենալու կամ սույն Համաձայնգրի իրագործման ձախողման դեպքում Կողմերը կփորձեն հարթել անհամաձայնությունը դատարանից դուրս: Եթե անհամաձայնությունը շարունակվի, կողմերը կդիմեն իրավասու դատարան:

Լորենի Համալսարանի
Նախագահ

Le Président
de l'Université de Lorraine

Pierre MUTZENHARDT

Université de Lorraine
Le Président

Պրոֆ. Պյեր Մուցենհարդ

Խ. Աբովյանի անվան Հայաստանի
Պետական Մանկավարժական Համալսարանի
Ռեկտոր

Պրոֆ. Ռուբեն Միրզախանյան